# «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ք.Երևան 375012 Բուզանդի 1/4
Հեռ.54-17-89,54-51-89

«Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100 ՀՎՀՀ 02504913

16/Բ N 125

«28» 02 2018թ.

ՀՀ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ՝

ՊԱՐՈՆ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Անանյան,*

Տեղեկացնում ենք, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 23.02.2018թ կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/15 որոշման կատարման նպատակով, «Երքաղլույս» ՓԲԸ-ի կարիքների համար «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-18/1» ծածկագրով շինանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված՝ բաց մրցույթի Գնահատող հանձնաժողովը կայացրել է որոշում՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի, «Էկոմիքս» ՍՊԸ-ի, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի, «Լիդեր Քոմփանի» ՍՊԸ-ի մրցույթին ներկայացրած հայտերը մերժելու մասին:

Կից ներկայացնում ենք գնահատող հանձնաժողովի 27.02.2018թ թիվ 5 արձանագրության լուսապատճենը:

Առդիր՝ 2 թերթ:

ՏՆՕՐԵՆ՝ Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Կատարողներ Ա. Անանյան ,
Ա. Մինասյան
հեռ. 010- 54- 39- 80

# Արձանագրություն թիվ 5
# «ԵՔԼ ԲՄԱՊՁԲ 18/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27 Փետրվարի 2018թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Վ. Հարությունյան
Հանձնաժողովի անդամ՝ Ա.Անանյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մինասյան

1. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 23.02.2018թ կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/15 որոշման կատարման վերաբերյալ

---

(Վ. Հարությունյան)

1. Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 23.02.2018թ կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/15 որոշումը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

**«Մեծ Ծիածան»** ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել՝ հայտի ապահովման գումարի չափն սահմանված 5 տոկոսից ավելի (0.5 դրամ) ներկայացնելու պատճառով.

**«Էկոմիքս»** ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել՝ հայտի ապահովման գումարի չափն սահմանված 5 տոկոսից ավելի (0.7 դրամ) ներկայացնելու պատճառով.

**«Ռաֆ-Օջախ»** ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել՝ հայտի ապահովման գումարի չափն սահմանված 5 տոկոսից ավելի (2.5 դրամ) ներկայացնելու պատճառով.

**«Լիդեր Քոմփանի»** ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել՝ հայտի ապահովման գումարի չափն սահմանված 5 տոկոսից ավելի (0.5 դրամ) ներկայացնելու պատճառով.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. 3; 4; 6; 16; 17; 18; 29; 31; 32-րդ չափաբաժնի մասով **«Ֆոտոն»** ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, նախահաշվային գինը գերազանցելու պատճառով, մերժելու որոշումը վերանայել, հիմք ընդունելով գնումների մասին օրենսդրությունը և հրավերով սահմանված կարգը, գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և 3; 4; 6; 16; 17; 18; 29; 31; 32-րդ չափաբաժնի մասով, գների նվազեցման համար «Ֆոտոն» ՍՊԸ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, որի անցկացման համար սահմանել օր՝ 2018թ-ի մարտի 5-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Բուզանդի 1/4 հասցեում տեղակայված՝ Պատվիրատուի կենտրոնական գրասենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ Վ. Հարությունյան

Անդամներ՝ Ն.Մելքումովա

Ա. Անանյան

Քարտուղար՝ Ա. Մինասյան